

# ՖԻՆԼԱՆԴԻԱ \*

ա. Գրականութիւն եւ մամուլ.

Թեֆորմացիայի շրջանը իր մեծ նշանակութիւնն ունեցաւ ոչ միայն մեծ, այլ և մասր ազգերի համար։ Լիւթերի ազդեցութիւնը տարածւում էր Գերմանիայից և հիւսիս։ Ֆինն ժողովուրդը նոյնիսկ իր կոսպաշտ շրջանում հետաքրքրում էր գըրքերով, նրանց ընթերցումով, այդ ժողովուրդի գրական տեսական լրացրին, բողոքական ֆինն ուսանողները։ Այդ ժամանակից սկսած վերածնում է նաև Ֆինլանդիան։

Նոր կրօնը մի առ ժամանակ յետաձգում է գրականութեան ծնունդը, բայց 16-րդ դարու վերջերը և մանաւանդ 17-րդ դարու սկզբներում բողոքական հոգևորականութիւնը հարթում է ուղին։

Սկզբում սկսում են տպագրուել ըստ սովորականին հոգեսր սաղմոսներ և և աղօթագրեր. իսկ 1640 թ., երբ հիմքնուում է Արօի համալսարանը, իսկոյն համալսարանի շուրջն են խմբւում հայրենի գիտնականները և կարճ ժամանակում տպագրութեան յանձնում մի շարք գրքեր՝ ազգային ժողովրդական վէպեր, դիւցազներգութիւններ, ժողովրդական երգեր և այլն։

Ահա այդպիսով սկսկում է ծնունդ առնել ֆիննական գրականութիւնը։

Սկզբում ֆիններէնը մի կողմն էր թողնուած և գրքերը տպւում էին շվեդերէն։ Բայց ժամանակի ընթացքում անձնուրաց գրողների մի փոքր մասը մտածեց հրապարակ հանել իր մայրենի լեզուն, ժողովրդին իր լեզուով գրքեր մատակարարել։

Հէսց այժմ էլ իւրաքանչիւր ֆինն պարծանքով շեշտում է որ լեզուն և մասսամբ կրօնն են այն երկու մեծ ֆակտորները,

\*.) ՏԵ՛Ռ «ՄՈՒՐՃ» № 2.

որոնք կարողացել են հաստատուն պահել և ինքնուրոյնութիւն տալ ժողովրդին:

Ֆինլանդական գրականութեան մէջ առաջին տեղը պիտի տալ Kälevala-ին, որն առաջին անգամ տպուեց 1835 թ. և հէնց առաջին անգամից իր վրայ գրաւեց գիտնական աշխարհի ուշքը:

Kälevala-ի հրատարակութեամբ հրապարակ է գալիս հայրենասէրների մի խումբ՝ «Փիննեան գրական ընկերութիւն», Այդ ընկերութիւնը եռանգուն կերպով հարց է բարձրացնում մայրենի լեզուի մասին, որ շուտով մեծ վիճարանութեան նիւթ է դառնում: Վիճարանութիւնը լայնանալով իր ժամանակին շվեդերէնի կողմանակիցները տեղի են տալիս և 1860 թ. վերջնականօրէն մեծամասնութիւնը, բոլորն էլ երիտասարդներ, ընկերութիւններ են կազմում, որի բնարանն էր. «Մի ժողովուրդ, մի լեզու»:

Այդ միջոցին կազմուեցաւ և մի այլ ընկերութիւն «Շուեդական գրական ընկերութիւն Ֆինլանդիայում»: Սկսում են հրատարակուել ազգային յայտնի գրողների գրուածքները, ինչպէս օր. Ֆրանցինի, Ռունէրեզի, Թոփելիուսի, որոնք հռչակուած էին XIX դարում:

Դրանցից Ռունէրեզը (Յովհան-Լիւդվիկ 1804—1877) երկան է գալիս որպէս նշանաւոր բանաստեղծ: Նրա Fänrik Ståls sägher-ի (պրապորչիկ Ստալի պատմուածքներ) նախերգանքը ազգային հիմն դարձաւ: Նրա պօէմների մեծ մասը գրուած է ազգային ոսկով:

Նրա պօէմներից նշանաւոր է 1836 թ. հրատարակած «Հաննա» երկը, որի մէջ Շիդիլական շրջանակներում պատկերացնում է պաստորների կեանքը և նրանցից մէկի սիրահարութիւնը ազնիւ ու անմեղ աղջկայ վրայ, 1832 թ. հրատարակուեցան «Որսկանը եղջերուի ետևից (Elgskyttarne)» և «Գերեզման Պերըյում»: Առաջնի մէջ հեղինակը պատկերացնում է ֆինն գիւղացու կեանքը տօն և լի օրերին, աշխատանքի կամ հանգստի ժամանակ: Նրա այդ բանաստեղծութիւնը Ֆինլանդիայի և «հազար լճերի» հետ են կապուած և հրաշալի արտայայտութիւններ ունեն:

«Ծննդեան երեկոյին» (Jungvällen) զըքում նկարագրում է հին զինուոր Պիսթոլինին, որը ծննդեան տօներին գալիս է իր հրամանասարի մօտ միասին տօնելու համար: Այդ երկի մէջ հինանալի է երկու րազմիկների վաղեմի յիշողութիւնը պատերազմի դաշտից:

1841 թ. հրատարակած «Յուսիկ» երկում ներկայացնում

է Եկատերինա և սիրահար Պոտեօմկինի կեանքը: «Իշխան Վոլոգդամար Պաւլովիչը» սիրում է ճորտունի Յուսիկին և վերջի վերջոյ թագունուց իրաւունք է ստանում ամուսնանալ նրա հետ:

Ռուներերգի ամենամեծ երկն է «Թագաւոր Ֆիալար» Էպոպէան (Kung Fjaler), որը հաստարակուեց 1844 թ.: Այդ երկում հեղինակը պատկերացնում է Ֆիրարի կոփւը ճակատազրի և աստուածների հետ, որոնց առաջ վերջ իշերջոյ ընկճում է և իր երկարէ կամքի խորտակուելուց յետոյ ստիպուած է լինում ճանաչել աստուածային կանոնների յաւիտենականութիւնը:

Ռուներերգը բացի բանաստեղծ լինելուց նաև դրամատուրգ էր: Նրա թատերգութիւններից ամենամեծն է հինգ արարուածով՝ «Թագաւորները Սալամինայում» (Kungarne på Salamis):

Այդ ոլորը Ռուներերգին հասարակական բանաստեղծ դարձրին մանաւանդ նրա «Հայրենիք»-ը (Vårt land), որը մինչև այժմ էլ ընդունուած է որպէս ազգային հիմն:

Ռուներերգի փառքին արժանացաւ նաև Զարարիա Թոռի փելլուս (1818—1898). Սա Փինլանդական առաջին լիրիկն է: Նրա «Դաշտային ծաղիկներ» (Ljung blommor) ժողովածուն կարելի է գտնել ամեն մի Փինլանդացու սեղանի վրայ: Բայց Թոռի լիուսին իր փառքին հասցրին նրա երեխաների ու պատանիների համար կազմուած «Դիրք մեր հայրենիքի համար» (Boken om vårt land) և «Դիրք բնութեան մասին» (Natures bok): Ունի և մի այլ գրուածք, որը թարգմանուած է եւրոպական մի քանի լեզուներով: Այդ գրուածքը կոչւում է «Ֆելտքերի պատմուածները» (Fältskarens berättelser): Սա հեղտալեզուով է գրուած և ներկայացնում Փինլանդական մի ընտանիք երեսնամեայ պատերազմի ժամանակի:

Նա ունի նաև մի տրագեդիա «Ռէգինա Փոն- էմմէրիաց», որը ներկայացնում է Գուստավ II Ադոլֆի յաղթուիլը (1632) Գերմանիայում:

Զ. Թոռի լիուսը Փինլանդական հասարակութեան բարեկամն էր և Փինլանդական երեխաների քարտուց: Նրա մահուանը (1898 թ.) ընդհանուր սուգ էր ամբողջ Փինլանդիայում:

Ռուներերգը և Թոռի լիուսը Ֆինլանդիայի Գեօթէն ու Շիլերն են հանդիսանում:

Ռուներերգից և Թոռի լիուսից յետոյ մէկ մէկու յետեկից հանդէս են գալիս մի շարք մանր մոմնը լիրիկ բանաստեղծներ, որոնցից մի քանիսը աչքի են ընկնում և արժէ ծանօթանալ և նրանց հետ:

Դրանցից է Յ. Խ. Վլիսելիա, որը ունի բազմաթիւ լիրիքական ոտանաւորներ և պատմական դրամաներ: Վերջին-

ներս նոյնպէս ոտանսաւորի ձևով են գրուած: Նրանցից է «Դա-նիէլ իւրդ» (Daniel Hjort), որը վերաբերում է XV դարու վեր-ջին, հերցող Կարլին:

Դարլ Օգոստոս Թաւաստստ'էրնա (Tavaststjernå), որը ունի չորս հատոր մի գրուածք, որոնք իրանց մէջ պարունա-կում են շվեդական պօզիտիայի գեղեցկագոյն ձևերը: Առանձնա-պէս աչքի է զարնում նրա «Առաւոտեան գեփիւրին» (För torg-gonderis) և «Պասկուածը» (Laureutus): Թաւաստստէրնան ունի նաև բազմաթիւ բոմսններ, որոնց մասին յետոյ կը խօսենք:

Օքսանէ (+1889) գլխաւորապէս աչքի է ընկնում իւր «Սո-վոլաքս», «Զարթիր, ոգի առ մայրենի լեզու-ով», որոնք բոլորը ընդհանրացած են և գիտէ իւրաքանչիւր ճշմարիտ Փինն: Նորա «Կայծերը» մանաւանդ մեծ ծառայութիւն է մատուցել Փին-նական լիրիկայի զարգացմանը:

Արվի Յովինանէս, որի բանաստեղծութեան մէջ յայտնի է հայրենասիրական «Զարթիր, օ Ֆինլանդիա»-ն՝ հրատարակուած 1889 թ.

Պատավօ Կայեանդեր, որը հրատարակեց Շէքսպիրի թարգ-մանութիւնը:

Բացի սորանցից 70 ական թուականների սկզբում հանդէս է զալիս Յ. Էրկոն իւր լիրիկական բանաստեղծութեամբ: Նա ժողովրդի զաւակն է և երգում է ժողովրդի ցաւը, նորա դարդը: Նա ընթերցողներին անզգայաբար յափշտակում և տա-նում է իւր հայրենիքի անտառները, լեռներն ու ձորերը, էր-կիօն բաւականացել է ուսուցչական սեմինարիայի ուսումով և ապա ճանապարհորդել է միջին արևմտեան և հարաւային եւ-րոպայում, պարապել է ինքնազարգացմամբ:

Իւր «Մարգարէ» գրամայի մէջ խօսում է նա Աստուա-ծաշնչից: Էրկոն աւելի յաջողութիւն է ցոյց տալիս Kalevala-ից արած քաղուածներում: 1893 թ. լոյս տեսած նորա «Այնօ» գրաման վերցրուած է այդտեղից, իսկ նիւթը կազմում է գե-ղեցկուհի Այնօի և Վայնիմոյնէի սէրը: Գեղեցկուհի Այնօն չէ կարողանում սիրել դիւցազն Վայնիմոյնային և իրան ջրախեղդ էանում:

Այսքանը բաւական համարելով Փիննական գեղեցիկ դըպ-րութեան հասին կանցնեմ արձակ գրուածներին, որտեղ Փինն գրողը պատկերացնում է այն բոլորը, ինչ ինքը զգում է և մտածում:

Կ. Օ. Թաւաստստէրնա, որի բանաստեղծութեան մասին արդէն տեսանք, նաև նշանաւոր է իր արձակ գրուածքներով:

Կարդալով նրա «Մանր Ժամանակներ» վէպը, մենք կար-

դացած կը լինենք նորա ինքնակենսագրութիւնը, որովհետև նորա ընտանիքն էր այդ տանջանքը կրում՝ հաց գտնելու համար:

1886 թ. նա առաջին անգամ հրատարակեց իւր առաջին վէպը «Մանկութեան Բարեկամնելոը» (Barndomsvänner), որը բաղկացած է 6 հատորից և որի մէջ նկարագրում է սիրող մատաղ սրտերի խորտակումը կեանքի մէջ:

Այդ գրուածքի մէջ գլխաւոր հերոսն է Բենիամին Թոմինը և նորա ընկեր ուսանող Զիբերգը: Զիբերգը սիրում է Զիգրիդ անունով մի աղջկան: Կարճ ժամանակից յետոյ կինը ձանձրացնում է նրան և նա թողնելով կնկան անցնում է Փարիզ, որտեղ ընկնում է լատինական թաղը: Զիգրիգը սկզբում ձանձրոյթ է զգում, իսկ ապա միախարւում է նրանով, որ ռուբիշ կին է դառնում: Նա այսուհետև առաջսորդւում է ինքնագոյութեան գաղափարով: Նա չափազանց շատ է աշխատում, մեծ վարձատրութիւն է ստանում և երբ մի քանի տարի յետոյ Բէնիամինը առողջութիւնը վերականգնելուց հայրենիք է վերադառնում, նրանց թւում է որ նորա արդէն հաշտութեան ճանապարհի վրայ են:

Շուտով մեռնում է թոքախտից Զիգրիդը իր ամբողջ գանձը թողնելով Բէնիամինին (իր ամուսնուն):

Ընդհանրապէս պէտք է նկատել որ հեղինակը սիրում է իր գրուածքում պատկերացնել երկու հակառակ տիպեր: Այդպիսի տիպեր են Բէնիամինը և Զիգրիգը: Առաջինն ուզում է ամբողջը զոհել լոկ ըոպէական քաղցրութիւնների, իսկ երկրորդը ընդհակառակը ապրում է ինքնագոյութեան գաղափարով: Եւ այդպէս էլ գաղափարական կինը մեռնում է իր կոկծից ու չափից դուրս գործելուց:

Այդ հեղինակութիւնից յետոյ նա լոյս է ընծայում մի այլ երկ «Հայրենիք» անունով: Այստեղ նա բոլոր մարդկանց բաժնում է երկու տիպի, երկու բնաւորութեան: Մի մասը ապրում է որոշ տեղում, իսկ միւսը կրում է համաշխարհային կոսմոպոլիտ անունը և ապրում է, սրան ուզում է: Դրանցից առաջինը՝ Վալինը դեմոկրատ գաղափարական մի մարդ է, որը ազգասիրական թերթ է հրատարակում: Նրա բարեկամ Հարդը իր կեանքի մեծ մասը անցրել է ճանապարհորդութիւններով և անընդհատ պարծենում է, որ ինքն իրառնք ունի իրան կոսմոպոլիտ անուաննելու: Հեղինակի գաղափարը իհարկէ յակուած է դէպի առաջինը: Նրա համար սիրելի է միայն այն մարդը, որը գնում է միայն այնտեղ, որտեղ ձգում է նրա սիրտը: Հեղինակի մասին ասում են, որ նա միակ թախծալից

բանաստեղծն է աշխարհիս ամենատիուր անկիւնում։ Բայց այդ ճիշտ չէ։ Հեղինակին երբէք չի կարելի պիսսիմիստ անուանել։ Նրա վերջին նովելլաներից «Կանանց Թագաւորութիւնը»-ը ծաղրում է երկու սեռի կոփւը։ Դր. Ուղղէն նոյն զաղափարական Վալլնն է, նա հոչակ է ստանում գրականութեան մէջ իր «Ծիրակնի բարոյական»-ը յօդուածով։ Նրա ծնողները ֆիններ են բայց նա շվեդերէնն է մայրենի լեզու ընդունում։ Ֆիններէնի հետ նա ծանօթ է Մուներերգի գրուածքներից։ Ժամանակի ընթացքում նրա մէջ ցանկութիւն է ծնում սովորել ֆիններէնը, որի համար նա փոխադրում է մի գիւղական խրճիթ, կարծելով այնտեղ կը գտնի իր փնտուածը։ Բայց նա սխալում է։ Գիւղացու տանը նա չէ կարողանում ապրել, որովհետև նրան դուր չէ գալիս սենեակը իր զարդարանքով։ Մի անգամ գիւղացու կինը նրան խելագար է համարում, երբ նա մտածում է սենեակի պատերը հին ամաններով զարդարել իսկ մի առաւօտ երբ նա ըստ սովորականին մարմնամարզութիւն է խաղում, մտնում է ծառան և նրան աղօթողի տեղ դնում։ Այդպիսի անյարմարութիւններ ամեն քայլափոխում երեսում էին նրա առաջ։ Գիւղից 42 վերսա հեռու գտնուող Հելսինգֆորս քաղաքի ուրախ ու զուարթ կեանքը նրան շուտով գրաւում է, մասնաւնդ, որ ձմեռուայ երկար անդորրութիւնը նրան ձանձրոյթ էր պատճառում։ Նա աշխատել չէր ուզում։ Անընդհատ մտածում է թէ գրականութեան որ ճիւղն է լաւ։ Վերջիվերջոյ ձանձրոյթը այնքան է պատում նրան, որ նա սկսում է հերքել իր իրակնի մասին գրածը։ Այդ բոլորի պատճառն այն էր, որ նա չէ կարողանում ըմբռնել իր շրջապատի հոգին։ Տանտիրուհու բարի որդուն նա բոլորովին անմիտ երեխայ էր անուանում։ Նրա կարծիքով մարդկութեան 990/0-ը ապրում է այդպիսի անաօնական կեանքով։

Այստեղ նրա գլխուու հարց է ծագում, պարզել այն խորխորատը, որ կրթութեան տեսակէտից բաժանում է երկու մեծ կաստաներին՝ հարստին և աղքատին։

Այս փոքրիկ ծանօթութիւնից յետոյ հասկանալի է թէ ինչպիսի նշանակութիւն կարող է ունենալ հեղինակի երկը, որտեղ այդպիսի զօրեղ տիպեր են հրապարակ գալիս։

1888 թ. հրատարակած «Բնիկը» (En infödding) մէջ պատկերացրած է իսկական ֆիննը համեմատած եւրոպացու հետ։

«Աշխատանքի ձախորդ ժամանակում» գրուածքում տալիս է գիւղական կեանքի թշուառ պատկերը 1867—68 մեծ սարսափելի սովի ժամանակ։ Այստեղ հեղինակը մերկացնում է

նոյնպէս այն պակասութիւնները, որոնց վարագուրել են նրա նախորդները:

Հեղինակի վերջին գրական պտուղն է «Անհայրենիք հայրենասէր» (En patriot utan fosterlandet) և «Ամուսնական ճանապարհորդութիւն»: Առաջինն աւելի քան թոյլ է նրա ամբողջ գրուածքների մէջ. իսկ երկրորդի վրայ արժէ կանգ տանել:

1893 թ. հրատարակած այդ նովելլան մի շարք պատմուածքներ են, որոնց մէջ կայ մի մատաղ զոյգի նամակը, որը գրուած է մեղրամի շրջանում: Այդ նամակում գրում է տղամարդու, կնոջ և ամուսնութեան մասին: Այդ նամակում կինը գրում է իր քրոջը իր ամուսնու վերաբերունքի մասին, որը իդէալական է, որպիսին ընդհանրապէս կարող է գոյութիւն ունենալ երկու մտածող դէմքերի մէջ:

Եատ թէ ըիչ հետաքրքիր է գեղարուեստագէտ մարդու նամակը, որ գրում է իր բարեկամին: Նա նկարագրում է իր ամուսնութիւնը և աւելացնում է, որ պսակը մեր ժամանակում այլ ձև է ընդունել, քան էր առաջ: Նա նկատում է, որ արդէն հրապարակ են եկել մի կարգ մարդիկ թարմ ոյժերով և գաղափարով: Նա իր բարեկամի ուշադրութիւնը դարձնում է նամանաւանդ իր կնոջ վրայ, որը իբսենի երկրպագուն է և ուրին դուր է զալիս հեղինակի «Նօրան» և դուր չէ զալիս «Հեղդա Հարլեր», խորհուրդ է տալիս կարդալ այն:

«Դրականութեան այդ տեսակը,—գրում է նա,—մեծ նշանակութիւն ունի մեղ տղամարդկանց համար և պէտք է չափազանց շնորհակալ լինենք իբսենից նրա համար, որ նա լոյս է սփոռել կեանքի շատ մուշտ կողմերի վրայ»: Նամակի հեղինակը գրում է իր բարեկամին, թէ ինչպէս առաջ ինքը փախչում էր գրականութիւնից, բայց այն օրից, որ նա ամուսնացաւ, փոխուց նաև իր վերաբերմունքը կնոջ գրական տաղանդի շնորհիւ: Այդ նամակում շարունակ ընդգծում է այն միտքը, որ տղամարդը պարաւոր է հասկանալ իր կնոջը և այդ պատճառով հասկացող տղամարդը ուղարկում է իր բարեկամին իբսենի Յ հատորը, ինդրելով ընդունել այն որպէս ամուսնութեան նուէր»:

Այս վերջին նովելլան հեղինակը գրել է իր մահուան մօտ, և աւարտելուց յետոյ անկողին է մտնում և մեռնում 1899 թ.

---

Յակով Արենբերգ (Jacob Ahrenberg), ծննուել է 1847 թ. նա գրական ասպարէզ է դուրս եկել մի քանի մանր պատմուածքներով, որոնք վերցրուած էին արևելեան Ֆինլան-

գիայի կեանքից, որտեղ ինքը հնախօսութեամբ էր զբաղուած։ Իր առաջին «Հիօգոլիտներ» նովելլան հրատարակեց 1889 թ., որտեղ նկարագրում է մի ինչ որ աղանդաւորի կեանքը։ Աղամ Պիլսերախ տիպը դուրս է բերուած բաւական վառ գոյներով։ Աղամը վարձում է մի գիննապանի սենեակ, որը 18 տարի շարունակ կաթով է կերակրել արևծագին իր մօտ եկող օձին, որին ամբողջ ընտանիքը սննսովոր յարգանք էր տածում։ Աղամը մեղք է համարում կերակրել օձին։ մի անգամ երբ օձը վերջացրել էր իր կաթը, Աղամը ջախճախում է օձի գլուխը և ձգում կրակը, Գալիս է տանտէրը և սարսափահար անիծում Աղամին։ Վերջինս լուռ ու մունջ լսում է բոլորը և ապա բացագանչում է. «Անիծեալ մարդկային սեռ. դուք մոռացել էք ճշմարիտ Աստըժուն և զո՞ն էք բերում հին օձին։ Եւ նրա այդ սարսափելի խօսքերն այնպիսի տպաւորութիւն են թողնում ընտանիքի վրայ, որ նա համաձայնում է Աղամի խօսքին։

Կարճ ժամանակում Աղամի շուրջն են հաւաքւում բազմաթիւ մարդիկ, որոնք ուրախութեամբ լսում են նրա Աստուածաշնչից կարդացածները, որից յետոյ սովորաբար ազօթում են և հիմներ երգում։ Այդպիսի պարապմունքով շուտով չարագործ թշնամիները բարեկամ են դառնում և համրուրում են բարեկամաբար, պարտապանները հատուցանում են իրանց պարտքը, արբեցողները թողնում են խմելը և սկըսում է նոր կեանք։ Կարճ ժամանակում ամբողջ գիւղը պաշտում է Աղամին։

Բայց անսպասելի կերպով փոխւում են հանգամանքները։ Մի անգամ յանկարծ գիւղում իմացւում է, որ Աղամը փախստական յանցաւոր է։ Շատ տարի առաջ նա մարդասպանութիւն է լինում գործած և նրան երկար բանտարկելութեան էին ենթարկած։ Նա փախչել է բանտից և պատահելով Հիօգոլիտներից մէկին աղանդաւոր է դառնում։ Տարիներ շարունակ նա անց է կացնում ազօթքներով և պաս պահելով իր մեղքը զըղջալու համար։ Աղամը վերին աստիճանի բարոյական մարդ է։ Նրա մէկքը միշտ ցոյց էր տալիս, որ նա աւելի է ճնշուում իր արած մեղքի, քան իր մարած կեանքի համար։

Արենբերգի «Ընտանիք. Հանակովիայից» գրուածքում մենք տեսնում ենք բազմաթիւ հասարակութիւններ, որոնք քնակում են Սև ծովի ափի ջրմուղներում։ Դրա բոլորոիլն հակառակն ենք տեսնում խաղաղ ու անդորր կեանք վարող ֆինլանդական քաղաքներից մէկը։ Այդ քաղաքում ապրում է մի խելօք մատաղ կին, ազգով ոռու։ Նա միանդամայն օտար է զգում իրեն

իր ամուսնու հայրենիքում, Այնտեղ մատաղ կինը դժուարանում է սովորել օտար լեզուն և նա սրբազն պարտք է համարում հեռանալ այդ քաղաքից և գնում էլ է, Բոլորովին դրա նման է և հեղինակի «Մեր հայրենսակիցը» բոմանը,

**Ի՞նչ է այդ գրուածքների միտքը:**

Գրուածքների միտքն այն է, որ Ռուսաստանում գտնուող ֆինները օտար երկրում ամուսնանալով օտարուհու հետ, ապագայում ստիպուած են լինում հեռանալ հայրենի երկրից:

Հեղինակն այլոց պէս հակառակ չէ Ռուսաստանին, այլ նրա ցանկութիւնն է, որ ոչ մի ֆինն երբէք չպիտի մոռանայ իր ազգութիւնը և հայրենիքը:

Դժուար է գտնել աւելի բազմակողմանի գրող քան Արենքերգը: Նրա տիպերն աւելի քան ամբողջական են և գեղարուեստական: Վերցնենք օրինակ նրա «Պատանեկութիւն» վէպի միջի օրիորդը: Այս գրուածքում պատմւում է մի գեղարուեստագէտի պատմութիւնը, որը սիրում է կննդանի կաղապարուհուն (натүրապիա): Մի աղջիկ, որ ինչպէս յետոյ տեսաւ, նա վերին սստիճանի կեղծիք է և ծանր ազդեցութիւն թողեց նրա վրայ: Այդ աղջիկը չէ կարողանում որևէ մէկի հետ խօսակցել, Գեղարուեստագէտը ամուսնում է նրա հետ, բայց վերջի վերջոյ նրանք բաժանուում են!

Արենքերգը լաւ ծանօթ է ոռուսական կեանքի և ոռուսական գրականութեան հետ և նա այդ ծանօթիւթիւնը ձեռք է բերել անզլիական, Փրանսիական և այլ ազգերի գրականութիւնից:

Համարեա նրա ամբողջ գրուածքներում աչքի է ընկնում Տուրգենևի ազդեցութիւնը:

(Կը շարունակուի)